ՀԱՎԵԼՎԱԾ
ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ԱՎԱԳԱՆՈՒ
2022 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 28-Ի
ԹԻՎ 11 ՆԻՍՏԻ
ԹԻՎ 197-Ա ՈՐՈՇՄԱՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԱՐՄԱՎԻՐԻ ՄԱՐԶԻ ԱՐՄԱՎԻՐ ՀԱՄԱՅՆՔԻ ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Սույն կանոնադրությամբ սահմանվում են Հայաստանի Հանրապետության Արմավիրի մարզի Արմավիր համայնքի տարածքում քաղաքաշինական գործունեության իրականացման առանձնահատկությունները՝ ելնելով համայնքի պատմականորեն ձևավորված ավանդույթների և պատմաճարտարապետական միջավայրի պահպանման անհրաժեշտությունից:

I.ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1.1. Համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը մշակվել է որպես առանձին փաստաթուղթ և այն պարտադիր հաշվի է առնվելու համայնքի քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի նախագծման ընթացքում:

1.2. Քաղաքաշինական կանոնադրությամբ ամրագրված պայմանները ներառվում են համայնքի ղեկավարի կողմից կառուցապատողին տրամադրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքում:

II. ՀԱՄԱՅՆՔԻ (ԲՆԱԿԱՎԱՅՐԻ) ՔԱՂԱՔԱՇԻՆԱԿԱՆ ԱՎԱՆԴՈՒՅԹՆԵՐԸ
(Ճարտարապետության առանձնահատկությունները և շինարարության տեխնոլոգիաները)

2.1. Արմավիր համայնքը կազմավորվել է 11 համայնքների՝ Արմավիր քաղաքի, Սարդարապատ, Այգեվան, Լենուղի, Արաքս, Նորավան, Լուկաշին, Խանջյան, Հացիկ, Մյասնիկյան և Մայիսյան գյուղերի միավորմամբ: 1929 թ. կազմվել է Արմավիր քաղաքի առաջին հատակագիծը Ալեքսանդր Թամանյանի կողմից, որի հատակագծման հիմքում դրվել է քաղաք-այգու գաղափարը: Հենց թամանյանական հատակագծի լուծումն է հանդիսանում այսօրվա Արմավիր քաղաքի կենտրոնական հորինվածքային միջուկը: Համաձայն գլխավոր հատակագծի՝ Արմավիր քաղաքի կարևոր հատված է հանդիսանում հարավ-արևմուտքից դեպի հյուսիս-արևելք ձգվող 1200մ երկարությամբ Հանրապետության փողոցը, որի շուրջ տեղաբաշխվում են հասարակական և բազմաբնակարան շենքեր: Այն սկիզբ է առնում «Սարդարապատ» երկաթուղային կայարանի մուտքից և ավարտվում է կանաչ պուրակներով շրջապատված կիսաշրջանաձև հրապարակով:

Հանրապետության փողոցի երկու կողմերով տեղաբաշխված են երկայնական և լայնական փողոցներ, որոնց շնորհիվ ստեղծվում է ուղղանկյուն կանոնավոր ցանց, իսկ կենտրոնական հրապարակի շուրջ ստեղծվող կամարաձև փողոցները ամփոփում են քաղաքի կենտրոնի հատակագիծը: Նշված հատվածում կառուցված են անհատական մեկ-երկու հարկանի տներ, բազմաբնակարան բնակելի երեքից հինգ հարկանի շենքեր, կրթական, առողջապահական, վարչական երկու-երեք հարկանի կառույցներ և երկաթգծի համալիր:

Կենտրոնական մասում գտնվող շենքերի ճակատային մասերի ձևավորման համար օգտագործվել են տուֆ քարեր կարմիր և սև գույների համադրությամբ, ինչպես նաև վարդագույն տուֆ քար:

Արմավիր քաղաքի Մշակույթի տունը և երկաթուղային կայարանի համալիրի շենքերը կառուցված են ավանդական հայկական ճարտարապետության ոճով: Իսկ քաղաքի վարչական և բազմաբնակարան բնակելի շենքերը կառուցված են սովետական ճարտարապետության ոճով: Սարդարապատ գյուղի Սբ. Աստվածածին եկեղեցին բազիլիկ տիպի կառույց է՝ կառուցված տուֆ տեսակի քարից: Արաքս գյուղում գտնվող Սարդարապատի ճակատամարտի հերոսներին նվիրված հուշահամալիրը բաղկացած է ինքնուրույն ճարտարապետական և քանդակագործական կոմպոզիցիաներից և կառուցված է կարմրանարնջագույն տուֆ քարից:

2.2. Նկարագրությունը հիմնավորվում է համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

Տես 2.1 կետի հավելվածը:

III. ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ԱՌԿԱ ՊԱՏՄԱՄՇԱԿՈՒԹԱՅԻՆ ՀՈՒՇԱՐՁԱՆՆԵՐԸ

3.1. Արմավիր համայնքում առկա են մի շարք պատմշակութային հուշարձաններ, որոնք տեղակայված են ինչպես Արմավիր քաղաքի, այնպես էլ համայնքի մաս կազմող գյուղերի տարածքներում: Արմավիր քաղաքի հիմնական պատմշակութային հուշարձաններն են Երկրորդ աշխարհամարտում զոհվածների հուշարձանը (ԵԱՀ)՝ տեղակայված քաղաքային զբոսայգում, քաղաքի գլխավոր հրապարակի համակառույցի մաս կազմող Մշակույթի տունը՝ կառուցված 1955 թ., և երկաթուղային կայարանի համալիրը: Աղասի Խանջյանի հուշարձանը՝ տեղակայված Խանջյան գյուղում, նույնպես կարևոր պատմամշակութային արժեք է ներկայացնում, քանի որ գյուղը անվանակոչվել է ի պատիվ Հայաստանի հերոս Աղասի Խանջյանի: Սարդարապատ գյուղում նույնպես առկա է հուշարձան՝ նվիրված երկրորդ աշխարհամարտի զոհերին, ինչպես նաև գյուղացիների ջանքերով 1882 թ. կառուցվել է Սբ. Աստվածածին եկեղեցին: Մյասնիկյան գյուղում առկա են երեք դամբարանադաշտ, որոնք թվագրվում են մ.թ.ա. 2-1 և 3-2 հազարամյակներ և համապատասխանաբար տեղակայված են բնակավայրի արևելյան մասում կամ ձգվում են 3.5 կմ դեպի հյուսիս: Համայնքի գլխավոր պատմամշակութային հուշարձանը Արաքս գյուղում գտնվող Սարդարապատի ճակատամարտի հերոսներին նվիրված հուշարձանն է:

3.2. Տվյալները հիմնավորվում են պատմության և մշակույթի անշարժ հուշարձանների պետական ցուցակներով, համապատասխան լուսանկարներով:

Տես 3.1 կետի հավելվածը:

IV. ՊԱՀՊԱՆՄԱՆ ԵՆԹԱԿԱ ՇԵՆՔԵՐ, ՇԻՆՈՒԹՅՈՒՆՆԵՐ

4.1. Համայնքի տարածքում գտնվող և համայնքի համար կարևոր նշանակություն ունեցող շենքերը և շինությունները.

1. *Արմավիր քաղաք*
   - *Մշակույթի տուն (քաղաքի կենտրոնական հրապարակում), 1955 թ., ճարտարապետ՝ Ռ. Ալավերդյան*
   - *Երկաթուղային կայարանի համալիր (շուրջ 3 շենք), 20-րդ դար, 1929 թ.*
2. *Սարդարապատ գյուղ*
   - *Սբ. Աստվածածին եկեղեցի, 19-րդ դար, 1882 թ.*
3. *Արաքս գյուղ*
   - *Հուշահամալիր Սարդարապատի ճակատամարտի հերոսներին, 1968 թ. ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան, քանդակագործ՝ Ա. Հարությունյան*
   - *Հայաստանի ազգագրության պետական թանգարան, ճարտարապետ՝ Ռ. Իսրայելյան, նկարիչ՝ Վ. Մարտիրոսյան*
   - *Ռեստորանի շենք «Վարդավառ», 1970 թ.*

4.2. Տվյալները հիմնավորվում են համապատասխան լուսանկարներով, գծագրերով:

V. ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ ԽՐԱԽՈՒՍՎՈՂ ՃԱՐՏԱՐԱՊԵՏԱԿԱՆ ՈՃԸ ԵՎ ՇԻՆԱՐԱՐԱԿԱՆ ՏԵԽՆՈԼՈԳԻԱՆ

5.1. Համայնքի տարածքում խրախուսվող ոճերն են հայկական ազգային, եվրոպական, սովետական, և մոդեռն:

1. Շենքերի և շինությունների ծավալային ու ճարտարապետահատակագծային լուծումներին, ինչպես նաև դրանց առանձին մասերին ներկայացվող պահանջները

ա. Ավանդական քաղաքաշինական և ճարտարապետական լուծումներ, քաղաքի մնացած հատվածներում ճարտարապետական ժամանակակից լուծումներ մինչև 3-ից 5-հարկանի, քաղաքաշինական կարևոր հանգույցներում՝ անհրաժեշտության դեպքում մինչև 7-հարկանի,

բ. շենքի ճակատային մասի արտաքին բացվածքների (դռներ, պատուհաններ, ցուցափեղկեր) ձևավորումը՝ քաղաքաշինական միջավայրին, պահանջներին և ավանդական լուծումներին համապատասխան.

գ. շենքի տանիքներն ու շենքերի հորիզոնական հարթությունները («հինգերորդ ճակատ»), ինչպես նաև ճակատները (ֆրոնտոնները), մանսարդները, ձեղնանցքները, եզրապատերը (պարապետները) և այլն.

շենքերի տանիքները կարող են լինել լանջավոր, հարթ և համատեղված: Ծածկերը կարող են լինել թիթեղյա, կղմինդր, «Հինգերորդ ճակատ» կարող են լինել կանաչապատ, ջրային մակերեսներ, սպորտային հարթակներ.

դ. շվաքարանները (տենտերը, մարկիզաները)՝

շենքերի ճարտարապետական լուծումներին համապատասխան, հաշվի առնելով ավանդական լուծումները.

ե. շենքի ճակատների և տանիքի հարդարման նյութերն ու երանգավորումը, արտաքին լուսավորությունը.

ճակատների համար տեղական տուֆ, բազալտ, գրանիտ, տրավերտին և այլ շինաքարեր՝ բաց բեժ, կարմիր, վարդագույն, սև, դարչնագույն երանգավորումներով: Արտաքին լուսավորությունը շենքերի ճակատների լուծումներին համապատասխան:

2. Փողոցների, անցումների, հետիոտն ճանապարհների ու հեծանվաուղիների (ճանապարհային ցանց), հրապարակների, ներքին բակերի և հարթակների կառուցվածքին ու ձևավորմանը, ավտոկայանատեղիների կազմակերպմանը ներկայացվող պահանջները

ա. ճանապարհային ծածկույթը (նյութը, դեկորատիվ տարրերը և գունային լուծումները)՝

ծածկույթը – ասֆալտ, կանոնավոր կտրվածքի տուֆ քար, չորսվասալ (բրուսչատկա) մայթերին՝ ասֆալտ, բազալտ, կանոնավոր կտրվածքի տուֆ քար, արհեստական սալիկներ (մոխրագույն, կարմիր, սև, դեղին):

բ. համայնքն սպասարկող տրանսպորտի համար նախատեսված կանգառների ձևավորումը՝

տեղանքին և միջավայրին համապատասխան՝ թեթև կոնստրուկցիաների կիրառմամբ:

գ. հաշմանդամների և բնակչության սակավաշարժուն խմբերի տեղաշարժման համար անհրաժեշտ կահավորանքը (թեքահարթակներն ու հատուկ հարմարանքները՝ լուսային, ձայնային և այլ նախազգուշացման միջոցներով)՝

կառավարության որոշմամբ հաստատված կարգին և նորմատիվ պահանջներին համապատասխան:

դ. ֆունկցիոնալ ձևավորումը, կանաչապատումը և կահավորանքը (փոքր ճարտարապետական ձևեր կամ դեկորատիվ արվեստի նմուշներ, զրուցարաններ, շվաքարաններ, նստարաններ, շատրվաններ, դեկորատիվ ջրավազաններ, կանաչ տնկարկներ, այդ թվում՝ ուղղահայաց կանաչապատում և այլն՝

տեղանքին և միջավայրին համապատասխան ժամանակակից լուծումներ՝ ավանդականի պահպանմամբ:

ե. ճանապարհային ցանցին հարող պարիսպների, ցանկապատերի (այդ թվում՝ դալար ցանկապատերի) կառուցվածքին, նյութին ու ձևավորմանը ներկայացվող պահանջները.

տեղանքին և միջավայրին համապատասխան ժամանակակից լուծումներ՝ ավանդականի պահպանմամբ:

3. Լանդշաֆտին, այգեպուրակային շինարարությանը և կանաչապատմանը ներկայացվող պահանջները

ա. ընդհանուր օգտագործման կանաչ տարածքների և հետիոտն շարժման ակտիվ գոտիների կանաչապատումն ու բարեկարգումը (փոքր ճարտարապետական ձևեր, ջրային մակերեսներ, շատրվաններ, նստարաններ, տաղավարներ, զրուցարաններ և բարեկարգման այլ տարրեր)՝ տեղանքին և միջավայրին համապատասխան ժամանակակից լուծումներ՝ ավանդականի պահպանմամբ:

բ. այգեպուրակային շինարարության կազմը (հենապատեր, ծառուղիներ, հարթակներ, աստիճաններ, ինչպես նաև ծառեր, թփեր, սիզամարգեր, ծաղկաթմբեր և գալարվող բույսեր, դեկորատիվ բուսական ծածկույթ, բազմամյա և միամյա բույսերի տեսակներ, կանաչապատման և բարեկարգման այլ միջոցներ)՝ տեղանքին, միջավայրին և կլիմային համապատասխան:

գ. անհրաժեշտության դեպքում՝ քամու դեմ պաշտպանական գոտու ստեղծման միջոցառումները (ծառատունկ, կանաչ ծածկույթների իրականացում տեղական ավանդական տնկանյութերի տեսակներից՝ տարբեր բարձրության բույսերի զուգակցմամբ)՝ բարդիներ, միջին բարձրության թփեր տեղական կլիմային համապատասխան, ավանդական տնկանյութեր: